Տ. ՄԱՐԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(23 նոյեմբերի 2006 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամեն»:

«Տուր զօրութիւն ծառայի Քո, կեցո զորդի աղախնոյ Քո, եւ արա առ իս նշան բարութեան»:

(Սաղմ. ՁԵ 16-17)

Սիրելի հավատացյալներ,

Սաղմոսի այս հատվածով և այս ոգով եմ ուզում սկսել իմ Ուխտի Ս. Պատարագի քարոզի խոսքերը՝ դիմելով ձեզ, որ աղոթեք մեզ համար, որ Աստված Իր սպասավորներին, Իր ծառաներին զորացնի, ամրացնի բոլորիս ի փառս Առաքելական մեր Մայր Եկեղեցու, Տիրոջ հաստատած Եկեղեցու, քանզի պարտ է մեզ օրնիբուն սպասավորել Տիրոջ Սուրբ Խորանին և Տիրոջ ընտրյալ ժողովրդին:

Սիրելիներ, գուցե առաջիկայում ավելի շատ աղոթքի և ձեզ ուղղված խնդրանքի խոսքեր լինեն, սակայն սա է այս պահին իմ հոգու ապրումը և իմ ներքին հոգեվիճակը: Տիրոջ կամքով տարիներ առաջ կոչվեցինք քահանայության, և Տիրոջ Սուրբ Խորանի վրա ամեն մեկը յուրովի է ընկալում, ամեն մեկը յուրովի է իր մեջ պատրաստակամություն տեսնում, և ինչպես Ս. Պատարագի ծածուկ աղոթքներն են ասում՝ «Մեզ չմերժեցիր, այլ արտոնեցիր Քո Սրբության առջև կանգնել, Տեր, և օրինավոր սպասավորություն կատարել»: Եվ ամեն անգամ ամեն մի հոգևորական այս խոսքերը արտասանելիս բնական է, որ զգում է պատասխանատվության ծանրությունը, զգում է Տիրոջ քաղցր լուծը և իր կյանքը նորովի անդրադարձ դարձնում համահունչ այս խոսքերին: Այս պահին ապրումներս նույնն են: Մատուցելով անդրանիկ Ս. Պատարագը Իջման Ս. Խորանին, իմ այսօրվա խոսքերը և այս պահի ապրումները այն են, որ սպասավորներ և հավատացյալներ միմյանց հետ աղոթելով կարողանանք ամեն մեկս մեր քրիստոնեական առաքելության մեջ մշտապես գտնել ուժ և կարողություն՝ հաղթահարելու բոլոր ծանրությունները, բոլոր դժվարությունները, ամեն պատնեշ, նեղություն և արգելք, որոնք կյանքից են գալիս ամեն րոպե և ամեն վայրկյան: Մեր ապրած ժամանակը ևս իր փորձություններն ու մարտահրավերներն ունի: Մեր օրերի պատնեշները, մեր օրերի խաբկանքները, մեր օրերի գայթակղությունները մենք անտեսանելի և քաղցր թույնի պես կարող ենք ընդունել: Ուստի որքան ժամանակը առաջ է գնում, որքան մարդկային միտքը սկսում է տարբեր-տարբեր գյուտերով կամ ստեղծագործություններով առաջ ընթանալ, այնքան բարդ է դառնում մեր այժմյան իրականությունը: Ուստի պետք է Տիրոջից հայցել ավելի շատ զորություն և օգնականություն: Բնական է, այդ արգելքները, նեղությունները, փորձանքները և գայթակղությունները նաև մեր Եկեղեցու սպասավորների առջև են ծառացած: Եվ միմյանց նկատմամբ որքա՜ն մեզ ավելի շատ սեր և հավատք, հոգևոր ու ջերմ վերաբերմունք է անհրաժեշտ, որպեսզի կարողանանք կյանքի այդ խաբկանքներին դիմակայել, լավը վատից, ժամանակավորը հավիտենականից, անցողիկը անանցանելիից զատենք և տարբերենք և մեր կյանքում դրանք դարձնենք հիմք և ճշմարտություն:

Սիրելիներ, հետևաբար այն նեղությունները և այն դժվարությունները, որոնք անտեսանելի են, որոնք մեզ պարտադրվում են երբեմն, որոնք մենք շատ անգամ չենք էլ տեսնում, բնական է՝ պետք է հաղթահարենք զինվելով հոգևոր զենքերով:

Մի փոքր անդրադառնանք մեր անցյալին, ընդհանրապես մարդկության պատմության անցյալին, և կտեսնենք, որ հիմնականում մարդիկ, մարդկությունը գիտեր իր ոսոխի կերպարը: Ուներ ժամանակի կամ ժամանակավորի և հավիտենականի նկատմամբ քիչ թե շատ գիտելիքներ: Այդ ամենը սակայն այսօր մեր ժամանակների համար քիչ թե շատ փոխված են և անտեսանելի: Մեր կողքին են, և մենք չենք տեսնում, մեզ ճնշում են, և մենք չենք տեսնում, որ դա ճնշում է, այլ ընդունում ենք որպես ժամանակի կամ որոշ կազմակերպությունների կամ միությունների պարգև: Սակայն ճիշտ անդրադառնանք, ճիշտ գնահատենք և մեր կյանքի մեջ դրանց դերն ու իրականության և անէության հետ առնչվող հարաբերությունները պարզ դարձնենք: Այս տեսանկյունից ես առավել ևս կուզեմ շեշտադրել հոգևոր սպասավորի համար կամ հոգևոր սպասավորի առջև ծառացած բարդությունների համակարգը: Բարդ է նաև մեզ համար, առավել գուցեն բարդ: Ինքներս կողմնորոշվենք և ժողովրդին փորձենք առաջնորդել, ուստի, սիրելիներ, դառնամ աղոթքիս ոգուն և դառնալով քարոզիս բնաբանին, պետք է խնդրեմ, որ այս պահին ևեթ աղոթեք մեզ համար՝ սպասավորներիս համար, Սուրբ Խորանի, Սուրբ Եկեղեցու սպասավորներիս:

Ավելի շատ մեր ժամանակին, ժամանակի ոգուն, խաբկանքներին, գայթակղություններին, մոլորություններին անդրադարձա, որովհետև այս նույն աշխարհում և այս նույն միջավայրում մենք էլ ենք սպասավորում և ծառայում: Նույն այս Պատարագի ծածուկ խոսքերը սակայն կցանկանամ վկայակոչել որպես քաջալերում և որպես մխիթարություն, ուր ասվում է. «Չմերժեցիր մեզ, այլ դրեցիր մեզ վրա ապաշխարություն և փրկություն»: Այդ ապաշխարությունը մեզ Տիրոջ կողմից հնարավորություն է՝ դուրս գալու բոլոր դժվարությունների միջից և հասնելու դեպի Աստվածային անմահ և հավիտենական ճշմարտությունները:

Սիրելիներ, ձեր աղոթքը թող լինի բոլորիս համար, մեր հոգևոր եղբայրների համար, երեք նորընծա եպիսկոպոսներիս համար: Մենք ձեր աչքի առջև, Միածնաէջ այս Սուրբ Տաճարում կոչվեցինք հովվելու Տիրոջ հոտի մեզ վստահված հատվածը: Թող Աստված մեզ ուժ, կարողություն, ամրություն և ամենակարևորը՝ ժամանակի մեջ չմոլորվելու և չխարխափելու ունակություն տա ձեր աղոթքներով և ձեր նվիրված եկեղեցասեր մասնակցությամբ: Եվ մենք Տիրոջ առջև ամոթով չմնանք և լինենք ձեր համար ծառա բարի, որը կառաջնորդի իրեն վստահված հոտը դեպի Տիրոջ անանցանելի ճշմարտություններ: Եվ Աստված լինի մեզ օգնական և պահապան այժմ և հավիտյանս. Ամեն: